



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2018 թ.

N 290-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՀԵՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԸՆԴՊՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ
(ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է:**

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական

մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Բ. ՍԱԿԱԿՅԱՆ

Ց Ա Ն Կ

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՄԼԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՀԵՏԱՏԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄԼԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹ ԶՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝
ԸՍՏ ՄԱՄԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ
ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՄԼԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՍՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ**

1. ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒՆԵՐ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը		Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը	
		Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ	Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ
0402	Մանկաբարձական գործ	5	2	25	28
0405	Դեղագործություն	-	2	-	28
0406	Քույրական գործ	5	2	25	28
0418	Բուժական գործ զինված ուժերում	5	-	25	-
	Պահուստային տեղեր	6	3	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	21	9	75	84

2. ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱԶԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒՆԵՐ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը
0501	Գործիքային կատարողական արվեստ այդ թվում՝ դաշնամուր	17	7
	լարային գործիքներ (ջութակ)	6	4
	փողային գործիքներ	2	-
	Ժողովրդական գործիքներ	3	1
		6	2
0502	Երգեցողություն	3	6

0503	Երգչախմբավարություն	2	1
0504	Երաժշտության տեսություն	1	1
0505	Էստրադային երաժշտարվեստ	2	5
	Պահուստային տեղեր	5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	30	20

**3. ԵՌԻՇԻԻ ԱՐՄԵՆ ԽԱԶԱՏԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
3.1 ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը
		Հիմնական կրթությամբ	Հիմնական կրթությամբ
0514	Դիզայն ըստ ճյուղերի	10	10
0515	Ջարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	10	10
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	5	10
2808	Հագուստի մոդելավորում և նախագծում	10	10
	Պահուստային տեղեր	5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	40	40

3. 2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ)
2302	Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համայնքներում	15
	ԸՆԴԱՄԵՆԸ	15

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը
0319	Պարի ուսուցում	10
0506	Դասական պար	10
	Ժողովրդական պար	10
	ԸՆԴԱՄԵՆԸ	30

5. ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՇԵՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՐԱՆ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում	15	10
2203	Համակարգիչների շահագործում	15	10
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	15	10
2311	Հասարակական սնունդ	15	10
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	15	10
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	15	10
	Պահուստային տեղեր	10	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	100	60

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՇԵՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՐԱՆ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (միջակարգ կրթությամբ)
2203	Համակարգիչների շահագործում	-	15	10
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	15	15	10
2311	Հասարակական սնունդ	15	10	10
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	15	10	-
2704	Գինեգործություն և հյուսիսի արտադրություն	15	10	10
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	15	10	10
2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում	15	10	-
	Պահուստային տեղեր	10	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	100	80	50

**7. ՇՈՒԵՒԻ «ԵՋՆԻԿ ՄՈՂՅԱՆ» ԱՐՇԵՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՐԱՆ
(ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)
1003	Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	15	5

1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում	15	5
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա	15	5
2311	Հասարակական սնունդ	15	5
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	15	5
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	10	5
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում	15	5
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	15	5
	Պահուստային տեղեր	5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	120	40

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ԱԱԶԱՐՅԱՆ